

ՏԱՍՆ ԵՒ ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպեկով:
Թիֆլիսում գրվում են միմյանց խմբագրատան մեջ:
Օտարադպրոցացիք գիտում են ուղղակի
Тифлис. Редакция «Мшак».

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն):
Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:
Ցայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպեկ:

„ՄՇԱԿ“ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ԲԱՆԱԲԱՅԱՆ ԼՐԱԿԻՐ

ՆԵՐԿԱՅ 1886 ԹԻՒՆ

Հրատարակվում է Թիֆլիսում, շաբաթը երեք անգամ, նոյն գիրքով և նոյն պրոպագանդով: Մենք տալիս ենք սեփական ՀԵՌԱԳԻՐՆԵՐ:
«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլ է, տասն և մէկ ամսականը 9 ռուբլ, վեց ամսականը 6 ռուբլ: Գրվել «ՄՇԱԿ» կարելի է խմբագրատանը և պ. ՇԱՎԵՐԴՈՎԻ պալլիկով: Խմբագրատանը հասնում է Բարսեղի և Բաղդասարի փողոցների անկյունում, Թամարաշվիլի տանը, № 12 բնակարանում: Ուղղակի մուտքը Բաղդասարի փողոցից է, ինչպէս նաեւ Ուսարաշվիլի դիմաց: ԱՐՏԱՍԱՀՄԱՆՑ «Մշակին» գրվելով կարելի է վճարել 25 ֆրանկանոց թղթադրամով: Թիֆլիսում «ՄՇԱԿ» համարները հատով ծախվում են 7 կոպեկով պ. ՇԱՎԵՐԴՈՎԻ պալլիկով: ՍԵՐԳՈՎՍԵՎՆԻ ծխախոտի մագալինում (կովկաս հիւրանոցի տակ) և պ. ԱԼԻՍԵՆՈՎԻ ծխախոտի մագալինում (Վ. օրօնցովի արձանի դիմաց): Ցայտարարութիւնները, ամեն լեզուներով ընդունվում են խմբագրատանը և պ. ՇԱՎԵՐԴՈՎԻ մօտ: Ցայտարարութիւնների իւրաքանչիւր բառին վճարվում է 2 կոպեկ: ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ, բաց է ամեն օր, առաւօտեան 10 ժամից մինչև 2 ժամ կէսօրից յետոյ, իսկ կիրակի օրերը առաւօտեան 10—12 ժամ:
Կայսերութեան ուրիշ քաղաքներէ «ՄՇԱԿ» գրվելու համար պէտք է դիմել հետեւի հասցեով: ТИФЛИСЬ, Редакция газеты «МШАК», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MCHAK»:
Հասցէն փոխելու ժամանակ պէտք է ուղարկել խմբագրութեանը 28 կոպեկ կամ 4 հատ 7 կոպեկանոց փոստային մարկա:

ԲՈՎԱՆԱԿԱՆԹԻՒՆ

Մեր գիւղացիների կեանքը: Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ: Յիշատակեան մանկական պարտեզների առկայությունը: Ներքին լուրեր: ԽԱՆԻ ԼՈՐԻՆԵՐ: ՀԵՌԱԳԻՐՆԵՐ: ԲԱՆԱԲԱՅԱՆ: Բարձրագույն օրինակները հաստատվեան մէջ: ՑԱՅԱՐԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՄԵՐ ԳԻՒՂԱՅԻՆՆԵՐԻ ԿԵԱՆՔԸ

«Մշակ» ներկայ համարում ընթերցողը կը գտնի մի լուր Ախալքալաքի գաւառի Գանձա գիւղից: Թէ ինչպէս մեր երկրի գիւղացիները անց են կացնում ձմեռայն աւանդները, անբան, անգործ, այդ յայտնի է ոչ թէ միայն մեր լրագրի ներկայ համարում տպված վերոյիշեալ լուրից, բայց յայտնի է մօտաւորապէս ամեն մարդուն, որ թիւ թէ շատ ծանօթ է մեր գիւղական ազգաբնակչութեան շատ կողմերից անմխիթար կեանքի հետ:

Բայց հարցը դրանումն է, թէ ինչ է սրա պատճառը և ինչ ձևով, ինչ միջոցներով կարելի է առաջն առնել այդ անմխիթար երեւոյթին:

Այն երեւոյթը, այսինքն գիւղացիների

անգործ, անբան մնալը ձմեռայն բոլոր ամիսներ ընթացքում ոչ թէ միայն յատուկ է այս կամ այն մասնաւոր գիւղին, բայց ընդհանուր կարելի է համարել մեր երկրի ամբողջ գիւղական ազգաբնակչութեանը: Ահա վերջանում են աշնան ամիսները, սկսվում է ձմեռը, և դրանով վերջանում է և գիւղացու գործը, դաշտային պարապմունքը: Եթէ այս կամ այն գիւղի դիրքը, նրա կլիման այնքան չէ նպաստում իր բնակիչների երկրագործական պարապմունքներին և աւելի արաւմուրդում է, պարտաւորեցնում է նրանց պարապել անասնապահութեամբ, այդ պարապմունքն էլ ձմեռայն ամիսների սկսվելուն պէս այլ ևս չարժանաւելի չէ կարող: Անասունները փակվում են գոմերի մէջ, այլ ևս չէ կարելի նրանց տանել, արածացնել ձիւնի հաստ տաւանով ծածկված սարօտ արօտատեղերում: Եւ անասնապահ գիւղացին էլ մնում է անգործ ձմեռայն ամբողջ ընթացքում: Եթէ գիւղացիները քիչ թէ շատ զբաղւած ու համեմատաբար հասկացող են, նրանք ձմեռն ընկած առաջին դիրքը կամ լրագրի անկարգ կեր-

պով կարող են կարգաւորել մասին վայր լի վերջ խօսում, դատում են: Եթէ անգործութեան, նրանց մնում է միայն ինչպէս և շատ ուղիղ կերպով նկատել է մեր թղթակիցը, անգործ նստել, միմեանց դէմ չարախօսել միմեանց բամբասել, իսկ գոցէ և հարբել ու միմեանց հետ վիճել ու կռուել...

Մենք գիտենք թէ այդ տղերքի կարգաւորող ինչ հարց պէտք է առաջարկի մեզ. «Եթէ ամեն երկրներում այդպէս չէ և ուրիշ, աւելի քաղաքակիրթ երկրներում ինչ պէտք է անել, կամ ինչ կարող է անել գիւղացին ձմեռայն ամբողջ ընթացքում»:

Ուրիշ երկրներում, կը պատասխանենք մենք, գիւղացիները, ձմեռայն ամբողջ ընթացքում, երբ նրանք ստիպված են ընդմիջել իրանց գիւղատնտեսական զբաղմունքները, նրանք զբաղվում են այս կամ այն տնային արդիւնաբերութեամբ, որ ուսուցանելով անուանվում է ԿՍՏԱՐՆԱՅԱ ՍՈՒՅՈՒՄՈՒՄ, իսկ գերմաներէն լեզուով «Klein-Production» անուն է կրում:

Հեռու չը գնանք, Թուրքիայի առեւտրական Եւրօպան, Թուրքիայի այդ կողմից մի այնպիսի օրինակելի և նմանվելու արժանի երկիր, ինչպէս Եվրոպայի մասին էլ մենք գիտենք առեւտրական կողմի մասին էլ մենք գիտենք յիշողութիւնների մէջ, բայց վերջինք մեզ մի աւելի մօտ երկիր, վերջինք նոյն իսկ Ռուսաստանը:

Ձմեռը Ռուսաստանի շատ տեղերում նոյնքան և աւելի խիստ ու երկարատեւ է, քան թէ մեր Կովկասի և Անդրկովկասի բարձրաւանդակ գիւղը ունեցող գիւղերում: Եւ այդպէս գիւղացին ձմեռայն ամիսները գործ է դնում ամեն տեսակ մանր տնային արդիւնաբերութիւններ պատրաստելու, որոնք համ զբաղեցնում են նրան ձմեռայն ամիսներին, համ էլ միջոց են տալիս նրան անգործ չը մնալով տարվայ մեռած եղանակին, փող վաստակել, ծախելով քաղաքների մէջ ձմեռայն ընթացքում իր պատրաստած ամեն տեսակ մանր մեւր և վերին աստիճանի պիտանի իրեղէնները: Կանայք գոր-

ծում, մանուկ, հիւսուկ, կարում են, կերպաներ են պատրաստում, տղամարդիկ շինում են փայտեայ զանազան պիտանի իրեղէններ, ծառերի կեղեիկ շնորհալի քթոցներ, զամբիւղներ, նստարաններ, կահ-կարասիք են պատրաստում, յարդեայ գլխարկներ են շինում և այլն և այլն...

Մի քանի տարի սրանից առաջ Մոսկվայում կայացած Ռուսաստանի պօլիտեխնիկական աշխարհահանգից ցոյց տուեց թէ ինչ ճարպիկ բաներ և շնորհալի տնային արդիւնաբերութիւններ կարող է պատրաստել ռուս գիւղացին և ինչպէս նա գիտէ օգտվել իր հայրենիքի աղքատ բնութիւնից և նրա երկար ու խիստ ձմեռայն ժամանակից:

Բայց ո՞վ պէտք է սովորեցնէ մեր գիւղացիներին ձմեռ անգործ չը նստել, այլ և այլ տնային մանր արդիւնաբերութեամբ պարապել և դրանով շահվել էլ: Կա մեր երկրի ամեն կարգի ու տեսակի Ժողովրդական դպրոցների գործ է, դա մեր երկրի ամեն տեսակ դպրոցների ուսուցիչների կողմից ու պարտաւորութիւնն է:

Եւ չը մոռանանք որ մեր երկրի իր դիրքով իր կլիմայով իր բնական արդիւններով անհամեմատ աւելի հարուստ է, քան թէ եւրօպական Ռուսաստանը, ուրեմն որքան աւելի բազմակողմանի կարող էին լինել մեր գիւղացու տնային արդիւնաբերութիւնները:

Բայց թէ ինչ տնային արդիւնաբերութեամբ կարող էր զբաղվել յատկապէս այս կամ այն գիւղը, այս կամ այն գաւառը կամ նահանգը, այդ ցոյց կը տար իւրաքանչիւր նահանգի, գաւառի, գիւղի գլխաւոր բնական հարստութիւնների, և տեղական ամենատնտեսական պէտքերի ու պահանջների սկզբնական խղճմունքը ուսուցիչասիրութիւնը, որի վրա մենք մեզ կրկին թողնել տալիս դարձնել մեր գաւառական բոլոր թղթակիցների ուղարկութիւնը:

Ահա դարձեալ ուղարկութեան, դիտողութեան, հետազոտութեան և ուսումնասիրութեան արժանի մի առարկայ, մի նշանաւոր խնդիր մեր լրագրի թղթակիցների համար: Գ. Ա.

ԲԱՆԱԲԱՅԱՆ ԳԱՆՈՒՄ

ԲԱՐԲԱՐՈՒԹԻՒՆ ԳԱՍՏՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Շատ սխալ է, երբ ուսուցիչն առանց նպատակի և անալիտիկական, վերլուծական խօսակցութեան, առանց աշակերտների մասնակցութեան սկսում է ինքը դատի մեծ մասը խօսել և պատմել: Առաջինը որ ուսուցիչը հեռացնում է իրան աշակերտի մտածման ընթացքից, երկրորդը ուսուցիչը աշակերտի հոգեկան շարժման, ձգտման և լարման արգելափակ է դառնում ու աշակերտին ձգում կատարելով չէզոքութեան մէջ:

Արդէն հին ճշմարտութիւն է, որ ուսուցիչը չը պիտի աշակերտի անձնական գործունէութիւնը սահմանափակել, այսինքն, որ ինքը չը պէտք է ստէ, գրէ, նկարէ, քանի որ աշակերտը ասել, գրել, նկարել կարող է: Եթէ ուսուցիչը կասկածում է աշակերտի վրա, թէ արդեօք նա իր առաջարկած նիւթը մշակելու ոյժ ունի թէ ոչ, թող փորձէ: Եւ եթէ աշակերտը մի տեղ կանգ է

առնում և մտածման թիւը կորցնելով չէ կարողանում շարունակել, ուսուցիչը չը պէտք է նորան յիմար, կամ զանազան կեղտոտ անուններ տալ, կամ մաղբից քաշէ, այլ պէտք է ուրիշ աշակերտի պատուիրէ առաջինին օգնելու: Եւ վերջինը արքան պէտք է առաջինին օգնէ, որ առաջինը կարողանայ կրկին ինքնօրէն շարունակել: Եթէ մի աշակերտ բանաստեղծութիւն բերան ասելիս 2 տուն ասում է և երրորդի սկիզբը չէ յիշում, միւսը պէտք է նորան այդ յիշեցնէ: Բայց և ի հարկէ չը պէտք է օգնութեան հրաւիրել այնպիսիներին, որոնց օգնութեան վրա ուսուցիչը կասկածում է: Եթէ ուսուցիչը համոզուած է, որ աշակերտներից ոչ մինը չէ կարող թերին լրացնել, այն ժամանակ ստիպուած է ինքն օգնելու:

Ուսուցիչը դասախօսածից, ինչպէս մի քարոյցից, աշակերտը զարմացմամբ և առանց ինքնուրոյն մտածման է ստանում նորը, ուստի որքան ևս ուսուցիչը դասախօսութեան հարուստ և գեղեցիկ լինի, բայց և այնպէս կամքի զարգացման չի ծառայի, ուստի և անօգուտ է:

Նոյնպէս և հարց ու պատասխանի ոճով (կատեխիտիկական) դասաւանդութիւնը բարձրագույն

է, որը նախ կրօնի դասաւանդութեան ժամանակ էին գործածում, բայց յետոյ նոյն իսկ ամենալավագույն ժողովրդի գերմանացուց մէջ, սկսեցին միւս առարկաները ևս այդ մեթոդով ստանդել: Եւ յիշում եմ որ մինչև անգամ մեր գիմնազիստի կրօնաւարը մեզ զանազան հարցումներ էր առարկաւորում, որոնց պատասխանը գրեց բերան պիտի սովորեցնէր և միւս դասին թուրքակի նման առանց հասկանալու ասէինք: Թէ և Պլատոն և Կանտը այդ մեթոդի համար լաւ կարծիքներ են յայտնում, բայց այդ մեծ մարդկանց կարծիքը կարող ենք հոգեբանութեան վրա հիմնուելով անհաստատ և մինչև անգամ սխալ համարել: Նախ պէտք է նկատած, որ հարց ու պատասխանի ոճով անցնելիս, աշակերտը իր մտքի աչքերով (mit geistigen Augen) ոչ մի նպատակ չէ տեսնում և ոչ թէ միայն նպատակ չունենալով, որ այդ վերոյիշած մեթոդին բարձրագույնութեան անուն են տալիս, այլ և աշակերտի ինքնուրոյն գործունէութեան ստուգելը:

Առհասարակ ուսուցիչը հաղորդում է արդէն պատրաստած նիւթեր, որոնց աշակերտը իր մտածման ընթացքով, որ հոգեբանապէս (Psychologisch) իրան աւելի մօտ է, ինքնուրոյն լուծի

և բացատրել կարող էր: Որին, Թուրքանու-թեան դասին մի խնդիր է տուած լուծելու: Ուսուցիչը չը պէտք է խանգարէ աշակերտի մտածման ընթացքը և սակայն հաշտեցնէ առաջ 1000 թ. որքան տուիւ կը բերէ, յետոյ որքան 200... և որքան 40 թիւը: Վերջը բոլոր ստացածները գումարեցէք միասին, կը ստանաք 1240/0>: Այն ժամանակ միայն կարող է ուսուցիչը աշակերտին աւելի լաւ ճանապարհ ցոյց տալ և վարել թեցնել, երբ աշակերտը իր սեփական ճանապարհով հասել է նպատակին:

Վերջապէս պէտք է աչքի առաջ ունենալ, որ հարց—պատասխանի ոճով անցնելը, ոչ թէ միայն աշակերտի ինքնագործունէութիւնն է խանգարում, այլ և նոր նիւթի հետեւնը պատահական է թւում, որին ինքը չէր սպասում: Սա բոլորովին հակառակ է այն հոգեկան դրութեան, որը կամքի զարգացման է ծառայում: Եւ բացի այդ, որովհետեւ աշակերտը կատարելով գիտակցութեամբ նպատակին չէ հասել, ուստի և չէ կարող միւս անգամ կրկին միևնույն ճանապարհով նպատակին հասնել: Նա նմանում է աչքերը կապած մի մարդու, որին մի օր և իցէ տեղ են առաջնորդում: Երբ միևնույն կանոնի վրա ուսուցիչը

இருபது,

Եթէ դասատուութեան նիւթերի հաւաքածուն
ամբի զարդացման ծառայող եւ դասատուութեան
պատասխան համապատասխանող է, այն ժամանակ

Դասատուութիւնը, որի նպատակն է կամօրի քառ

Երբ որդիք էս քաղաքի շարունակ անցանալովս թխին։

Չորրորդ՝ դասատուները պետք է մանկան հոգու մէջ այնպիսի դրութիւն յառաջացնէ, որ միւս հոգեկան դրութեանց տիրապետող լինելու Ազգ անում է դասատուները, երբ աշակերտ մէջ հետաքրքրութիւն է յառաջացնում։ Հետաքրքրութիւնն է բոլոր կամքի հիմքը և դրա համար էլ Հերբարտի մանկավարժութեան մէջ առանկարդ տեղ է բռնում։ Մեր ժամանակակից ուսուցիչները, որոնք կարծում են դասատուներ մտելու միայն մտաւոր զարգացում է տալիս ոչ բարոյական կրթութիւն, առհասարակ զաղկաւոր չունեն, որ մի և նոյն ժամանակ դասատուութեան միջոցաւ եւ կարելի է մանկան կրթիւն Հերբարտը այդ ազգի առաջ ունենալով, ասում է՝ «դասատուները մանկան մտածման շրջանն զարգացնում և կրթութիւնը՝ մանկան կամքը։ Վերջինս առանց առաջինի ոչինչ է, այսինքն բնութեան օրոգացման, կռակի և մտաւոր զարգացման»։

Ռւսմանոյ

